«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ընտանիքի մասնակցությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների բնական գիտությունների ուսուցման գործում

Հետազոտող ուսուցիչ՝ Ծաղիկ Թաթուլյան

(Բայանդուրի միջնակարգ դպրոց)

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն.....3

2. Ներառական կրթության կարևորությունը.....5

3. Ընտանիքի դերը կրթության իրականացման գործընթացում.....6

4. Բնագիտական առարկաների դերը երեխայի կյանքում.....13

5. Եզրակացություն 18

6. Գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է, որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքների արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կատարման արդյունքում ԿԱՊԿ ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն են ստանում երեք մակարդակում՝ Հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը[1]:

Մեծ է ուսուցչի՝ որպես կրթողի դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում, սակայն ուսուցիչն ավելի վստահ ու գործուն է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի և ընտանիքի անդամների հետ ունի ընդհանուր նպատակ: Այս առումով առանցքային է երկու սուբյեկտների առողջ համագործակցումը, խնդիրների միասնական վերհանումը, դրանց լուծումները փնտրելու ճանապարհին փոխգործակցությունը: Ստացվում է, որ երկու կողմերը այս գործընթացում փոխլրացնում են միմյանց՝ նպատակ ունենալով անցնցում ապահովել սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքը:

Այսօր առանցքային հարցերից մեկը հանրակրթության ուսուցիչների դժվարություններն են՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին բնագիտական առարկաներ դասավանդելու և դասարանում ներառական միջավայր ստեղծելու հարցերում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության հաջող ընթացքը :

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականությունությունը համար հենքն է հանդիսանում սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքը և այդ իրավունքի իրացման ճանապարհին ընտանիք-ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումն այն համատեքստում, որ երկու կողմն էլ շահագրգիռ են, որ այդ իրավունքի իրացման գործընթացը լինի

արգասաբեր, հաջողություններով ու հաղթանակներով լի:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ընտանիք-ուսուցիչ կապի դրական ազդեցությունը սովորողների բնագիտական առարկաների ուսումնառության, դաստիարակության, ընդհանուր զարգացման ու աշխարհահանաչողության վրա:

Հետազոտության խնդիրը: Սահմանել այն եղանակներն ու ձևերը, որոնց շրջանակներում թույլատրելի է և անհրաժեշտ, որպեսզի ընտանիքն ու ուսուցիչը, միմյանց փոխօգնելով ու փոխլրացնելով, նպաստեն, որ ուսումնական գործընթացում սովորողն ունենա գիտակցված մոտեցումներ բնագիտական առարկաների հանդեպ, առաջադիմի, ունենա կրթական չափորոշիչների վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, հմտություններ ու կարողություններ:

ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողների և բազմամասնագիտական թիմի միջև թույլ համագործակցային հարաբերությունները:

ՈՒսուցիչների ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու գլխավոր խնդիրները:

Ներառական կրթության կարևորությունը

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում ԿԱՊԿ ունեցող և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության, մոտեցումների, կառույցների և մեթոդական համակարգի մեջ, տարածվում է համապատասխան տարիքային խմբերի բոլոր երեխաների վրա: Ներառման գործում կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմատարրության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար: Այսօր Հայաստանում ավելի ու ավելի է տարածվում բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները. նրանց մեջ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է ուսումնառության որոշակի մոտեցման կիրառման դեպքում:Ներառական կրթության կազմակերպումը ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթական հաստատություններ անարգել մուտքի համար տեխնիկական պայմաններ ստեղծելու խնդիր է, այլև նորմալ զարգացող երեխաների և նրանց ծնողների կողմից ընդհանուր կրթական

գործընթացում հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցության կարևորության մասին գիտակցում: Ներառական պրակտիկայի իրականացման հաջողությունը մեծապես կախված է ուսուցիչների և ծնողների համատեղ փոխգործակցության պատրաստակամությունից: Դպրոցում արդյունավետ կրթական գործընթացի համար անհրաժեշտ է կազմակերպել բարձրորակ հոգեբանական և մանկավարժական աջակցություն հաշմանդամ երեխաներ դաստիարակող ընտանիքներին, ինչպես նաև ստեղծել բարոյահոգեբանական հատուկ մթնոլորտ ուսուցչական և ուսանողական կոլեկտիվներում: Ներառական դպրոցում շատ կարևոր է, որ երեխաները, ծնողները և դպրոցի մասնագետները, առաջին հերթին, գործընկերներ լինեն: Այս դեպքում ծնողների հետ աշխատելու անհրաժեշտությունն անհերքելի է:

Ընտանիքի դերը կրթության իրականացման գործընթացում

Երեխայի ընտանիքը որոշիչ դեր ունի հերառական կրթության իրականացման գործընթացում, քանի որ մասնակից է երեխայի փոխադրմանը տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց: Ուստի հարց է առաջանում, թե ինչու է ծնողների դերը հաճախ անհկատ մնում երեխաների կրթության գործընթացում: Պատմականորեն շատ երկրներում ընտանիքը կարծես դուրս է մնացել երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմից՝ հիմնականում ստանձնելով մասնագիտական կարծիք լսողի դերը: Նույն իրավիճակը եղել է նաև Հայաստանում, որտեղ ծնողների և մասնագետների երկխոսությունը հաճախ շարունակում է առավել ավանդական և հիերարխիկ բնույթ կրել: Ծնողները կամ ընտանիքի անդամները հիմնականում ներկայանում են հանդիպումների թեստերի արդյունքներին ծանոթանալու կամ իրենց երեխային վերաբերող արդեն իսկ կայացրած որոշումները լսելու համար: Դպրոցը, որպես կանոն, ծնողների հետ կապվում է, երբ նրանցից որևէ բան է հարկավոր կամ երբ ինչ-որ բան է պատահել: Ընտանիքների դերի փոփոխությունը պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը պասիվ ստացողից ակտիվ մասնակցի վճռական նշանակություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է: Դա կարևոր է, քանի որ ընտանիքն առավել համընդգրկուն տեղեկատվություն է ստանում երեխայի մասին և իմանում է ավելին, քան վկայում են թեստերի արդյունքներն ու գնահատականները: Ընտանիքների մեծ մասը գիտակցում է երեխայի առաջընթացն ու կարիքները, սակայն հիմնականում մնում է որպես պասիվ ռեսուրս՝ չունենալով իր ներդրումն այս գործընթացում: Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընտանիքների և մասնագետների առաջին հանդիպումը տեղի է ունենում մանկավարժահոգեբանական գնահատման ժամանակ: Ընտանիքներն այս թիմի անդամներն են և մասնակցում են քննարկումներին, խորհրդակցություններին, հանդիպումներին և դասընթացներին: Ցավոք,

ներառական կրթության համատեքստում մանկավարժներն ու ընտանիքի անդամները համագործակցության անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ չունեն: Մինչդեռ այդ համագործակցությունն էական նշանակություն ունի երեխայի կրթության արդյունավետության տեսանկյունից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության հաջող ընթացքը :

Միացյալ Նահանգներում անցկացվել է երկարաժամկետ հետազոտություն՝ նվիրված միջնակարգ դպրոցում սովորողների զարգացման խանգարումներ ունեցող աշակերտների առաջադիմությանը: Պարզվել է, որ ավելի բարձր է 57 այն երեխաների առաջադիմությունը, որոնց ընտանիքներն ակտիվ մասնակցություն են ունենում երեխայի ուսումնական գործընթացում: Այդ համագործակցության դրական արդյունքներից են երեխայի բարձր գնահատականները, ընկերներ ունենալը և դպրոցն ավարտելուց հետո հաջողության հասնելու առավել մեծ հավանականությունը: Ընտանիքների ներգրավումը կրթական գործընթացում նպաստում է երեխայի հմտությունների զարգացմանը, սովորելու մոտիվացիայի խթանմանը և դրական վարքի դրսևորմանը: Ընտանիքի ներգրավումը կրթական գործընթացում տրամաբանական մեկնաբանություն և արդյունավետություն ունի:

Ինչպես արդեն նշվեց, ընտանիքն իր երեխայի մասին հոգ է տանում նրա ամբողջ կյանքի ընթացքում: Կրտսեր դպրոցական տարիքում դպրոցի հետ ամուր հարաբերությունների հաստատումն օգնում է երեխային և նպաստում նրա ընտանիքի ու դպրոցի միջև հարաբերությունների զարգացմանը: Հետագայում՝ երեխայի հասունացման ընթացքում, ընտանիքում արդեն ձևավորված են լինում մասնագետների հետ աշխատելու հմտություններ: Կարևոր են նաև մասնագիտական հաղորդակցման այն հմտություններն ու ռազմավարությունը, որոնք անհրաժեշտ են ընտանիքները երեխաների դպրոցական կյանքի ակտիվ մասնակիցները դարձնելու համար: Ընտանիքի հետ աշխատելիս էապես կարևոր է զարգացնել այնպիսի հարաբերություններ, որոնք տարբերվում են անցյալում եղած հարաբերություններից: Ներառական կրթության համատեքստում ընտանիքի և երեխայի կարիքներն ու տեսակետները կարող են բնութագրվել նրանց լավ ճանաչող մասնագետների կողմից: Այս մոտեցումը ներկայումս լայն տարածում չունի, քանի որ երեխայի ընտանիքը մասնագետների կողմից դեռևս լիարժեք չի ընդունվում որպես դպրոցի միջավայրի մի մաս և չի արժևորվում նրա դերը: Ընտանիքի հետ հարաբերություններ հաստատելու համար կարևոր են երկխոսությունն ու սերտ շփումները: Մասնագետին կարող է հետաքրքրել՝ ա) ի՞նչն է մոտիվացնում ընտանիքին, բ) որո՞նք են դպրոցի կյանքում ներգրավվելուց ընտանիքին հետ պահող մտավախությունները, գ) ինչպե՞ս է դպրոցը ընտանիքին հրավիրել մասնակցելու երեխայի կրթական գործընթացի պլանավորման գործընթացին: Այսպիսի հարցերն օգնում են հասկանալու և ողջունելու ընտանիքի մասնակցությունը երեխայի կրթության պլանավորման գործընթացում: Միաժամանակ երեխային լավագույնս օժանդակելու

համար ընտանիքը պետք է ընդունի, որ երեխան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի, և պետք է ցանկանա աշխատել ուսուցիչների և այլ մասնագետների հետ: Վարքագծի նման փոփոխությունն ընտանիքի և մասնագետների համար կարող է արտասովոր լինել: Այս նոր մոտեցումը թե՛ ընտանիքից և թե՛ մասնագետներից պահանջում է ժամանակ և նպատակադրում:

Հայաստանում համընդհանուր ներառական կրթության քաղաքականության իրականացման համատեքստում տրամադրվում են կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ:

Ինչպես սահմանում է «Հայաստանի Հանրապետության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 10.4-րդ կետը, «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, երեխայի կրթության արդյունավետ կազմակերպման համար, սովորող երեխայի, նրա ծնողն կամ օրինական ներկայացուցչին, նրա ուսուցիչներին ու նրա հետ աշխատող այլ մասնագետներին տրամադրող ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցությունն է»: Երեխայի կրթության իրականացման համար ստեղծվում է բազմամասնագիտական թիմ:

Բազմամասնագիտական թիմը բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում: Թիմը կազմված է մասնագետներից, ընտանիքի անդամներից, իսկ հարկ եղած դեպքում թիմին միանում է նաև երեխան: Թիմի գործողությունները կարող են տարբեր լինել՝ երեխայի գնահատումից մինչև նրա անհատական ծրագրի քննարկում կամ երեխային հաջողությամբ օժանդակելու համատեղ աշխատանքի պլանավորում: Թիմում առանցքային ներկայացուցիչները մասնագետները և ծնողներն են: Բացի նշվածներից, բազմամասնագիտական թիմը երեխայի աջակցության համար կարող է ներառել նաև ընտանիքի այլ անդամների՝ քույրերի, եղբայրների, տատիկների, պապիկների կամ ուրիշների, որոնք լավ են ճանաչում երեխային և պատասխանատու են նրա առօրյա խնամքի կազմակերպման համար: Այս մոտեցման նպատակը երեխային լավ ճանաչող, նրա հետ աշխատող և տարբեր միջավայրեր ներկայացնող մարդկանց ջանքերը մեկտեղելն է: Բազմամասնագիտական թիմի կազմը որոշելուց հետո մասնակիցներից մեկ-երկուսը նշանակում են խմբի համակարգող: Ցանկալի է, որ նրանց թեկնածությունները թիմը հաստատի. թիմի ղեկավար սովորաբար դառնում են ուսուցիչը, հոգեբանը կամ երեխայի հարցերով անմիջականորեն զբաղվող անձը: Որպես կանոն, առաջնորդություն ստանձնում են մի քանիսը, օրինակ՝ ուսուցիչը, մասնագետներից և ընտանիքի անդամներից մեկական մասնակից: Վերջինիս ներգրավումը թիմում հնարավոր է միայն այն դեպքում, երբ թիմում առկա է փոխադարձ վստահություն և երեխայի ընտանիքի անդամն իրեն անկաշկանդ է զգում այնտեղ:

Ուսուցիչներ

Ընդհանուր և հատուկ մանկավարժները պետք է ներառական դասարաններում հավասար պատասխանատվություն ունենան դասարանի բոլոր երեխաների համար: Դասարանում հանրակրթության ուսուցչի դերը հիմնականում առարկայի ուսուցումն է: Սակայն համատեղ աշխատող թիմում հանրակրթության ուսուցչի դերն ընդլայնվում է ներառելով՝

- առաջնային գնահատում,
- մասնակցություն անհատական ուսումնական պլանի մշակմանը (օգնում է մշակել, վերանայել և համապատասխան փոփոխություններ կատարել),
- աջակցություն միջամտության կազմակերպմանը կրթական ռազմավարությունը սահմանելիս,
- աջակցություն կրթական ծրագրի փոփոխությունների իրականացման գործընթացում,
- բարոյական աջակցություն անձնակազմին հանրակրթության ծրագրում աշակերտի առաջընթացը խթանելու նպատակով,
- դպրոցի և ընտանիքի կապի պահպանում. ուսուցիչը ծնողներին պարբերաբար տեղեկացնում է աշակերտի ուսումնական առաջադիմության մասին, հայտնում է գնահատականները և ներկայացնում է կրթական ծրագիրը:

Հատուկ մանկավարժ

Հատուկ մանկավարժի պարտականություններից է անհատական ուսումնական ծրագրի մշակումն ու ձևափոխումը: Որպես բազմամասնագիտական թիմի անդամ՝ հատուկ մանկավարժը կարող է առաջարկներ կատարել ուսուցման ձևերը բազմազանեցնելու, լրացուցիչ ռեսուրսներ և այլընտրանքային մոտեցումներ կիրառելու վերաբերյալ: Հատուկ մանկավարժի պարտականություններից են՝

- աշակերտի ուսուցման պլանավորման և գնահատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- ընդհանուր մանկավարժներին խորհրդատվության տրամադրում (համատեղ դասավանդում),
- մասնակցություն երեխայի գիտելիքների գնահատման գործընթացին,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին խորհրդատվության և աջակցության տրամադրում ամբողջ ուսումնական գործընթացում, այդ թվում՝ արտադասարանական

միջոցառումներում ներառելու վերաբերյալ: Հատուկ մանկավարժները և ուսուցիչները ծնողների ու աշակերտների հետ կարող են համագործակցել նաև հետևյալ ձևերով.

- ծնողներից հնարավորինս շատ տեղեկատվություն ստանալ երեխայի մասին,
- տեղեկացնել ծնողներին երեխայի առանձնահատկությունների, նրա պաշտպանության, անհատական ուսումնական պլանի (ԱՈՒՊ-ի) կազմման գործընթացում ներգրավվելու նրանց իրավունքի և որպես թիմի անդամների՝ նրանց դերի մասին,
- օժանդակել ծնողներին ԱՈՒՊ-ի կազմման գործընթացը պլանավորելիս՝ ապահովելով, որ նրանց մտքերը, անհանգստությունները ու կարծիքները արտահայտվեն և լսելի լինեն,
- տրամադրել ծնողներին երեխայի հետ տանը աշխատելու վերաբերյալ առաջարկություններ,
- օգնել երեխային և ծնողին՝ պլանավորելու աշակերտի ապագան դպրոցն ավարտելուց հետո:

Բազմամասնագիտական թիմի գործունեության հիմնական ձևը թիմային աշխատանքն է: Արդյունավետ թիմային աշխատանքը պահանջում է ոչ միայն սոսկ հանդիպումների, քննարկումների անցկացում, այլև համայնքային ոգու սերմանում, երեխայի նկատմամբ ընդհանուր պարտականությունների հանձնառություն: Առանձնապես կարևոր է, որ ծնողները իրենց անկաշկանդ զգան, քանի որ ընտանիքի ներկայությունը ողջունելի է թիմում. ծնողները պետք է իմանան, որ գաղափարների փոխանակումը կարևոր նշանակություն ունի գործընթացի համար, որ իրենց պետք է լսեն ու միաժամանակ իրենք պետք է լսեն: Ընտանիքները իրենց հաճախ ճնշված են զգում, եթե գործընթացի մեջ չեն ներգրավվում կամ չեն ընկալում իրենց ներկայացված տեղեկատվությունը: Թիմի համար կարևոր է փորձել հասկանալ ընտանիքի առջև ծառացած խնդիրները՝ առանց նրանց քննադատելու կամ գերհոգածություն դրսևորելու: Ընտանիքի հետ հարաբերությունները ժամանակի ընթացքում կարող են մտերմանալ, եթե ընտանիքը զգա, որ իրեն հասկանում և ընդունում են: Ներկայության հիմնական նպատակն է ծնողին օգնել, որ երեխային տեսնի որպես ներառական միջավայրի մասնիկը և գիտակցի իր դերը երեխայի կրթության գործընթացում: Մասնակցությունը ենթադրում է ծնողների ներկայությունը դպրոցական միջոցառումներին և ժամանակ առ ժամանակ այցելությունները դպրոց՝ ծանոթանալու տարբեր մանկավարժական հնարներին, որոնք կարող են օգտագործվել տանը իրենց երեխային օգնելու համար: Ներգրավվածության փուլում ծնողները և ուսուցիչները սկսում են համագործակցել՝ միմյանց դիտելով որպես երեխայի կրթության գործընկեր: Ներգրավվածությունը պահանջում է բարձր մակարդակի համագործակցություն և հզորացնում է ընտանիքին, ուսուցչին ու բազմամասնագիտական թիմի մյուս անդամներին: Միաժամանակ

ներգրավվածությունը ընտանիքին հնարավորություն է տալիս զարգացնելու երեխայի օժանդակության ստեղծագործական մոտեցումները:

Բնագիտական առարկաների դերը երեխայի կյանքում

Մտածելը գիտելիքի հիմքն է: Շրջապատող իրականության արտացոլման գործընթացում առանձնանում են զգայական և տրամաբանական ճանաչողությունը, իսկ գիտելիքի յուրացման առաջին փուլը առանձին փաստերի կամ երևույթների ընկալումն է: Ինչպես կիրառվում է բնության գիտելիքների նկատմամբ կրտսեր դպրոցականների կողմից: Տարրական օղակում բնական գիտությունների դպրոցական դասընթացում հիմնականում ձևավորվում են սկզբնական հասկացություններ, որոնք առաջին անգամ երեխաներին

ծանոթացնում են շրջապատող աշխարհի օրենքների ըմբռնմանը, հենվում են կրտսեր աշակերտի զգայական փորձի վրա:

Սկզբնական հասկացությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ, անկախ սովորողի տարիքից, օրենքների սկզբնական յուրացումը, առարկայի էությունը կամ շրջապատող իրականության երևույթն իրականացվում է սովորողներին հասանելի զգայական հիմունքներով: Օրինակ, 1-ին դասարանում սովորողները արդեն որոշակի պատկերացումներ ունեն բնության, վայրի բնության բազմազանության մասին: Բայց միայն 2-րդ դասարանում են ուսումնասիրում «ոչ կենդանի բնություն», «կենդանի բնություն» նախնական գիտական հասկացությունները, այսինքն. առաջին անգամ նրանք սկսում են հասկանալ, որ բնության ողջ բազմազանությունը կարելի է հստակորեն բաժանել երկու կատեգորիայի՝ անշունչ և կենդանի: Այսպիսով, նախնական գիտական հասկացությունների յուրացումը որոշում է կրտսեր սովորողների անցումը իրական առարկաների և երևույթների գիտական գիտելիքներին: Կարևոր է, որ տարրական օղակում ուշադրություն դարձվի ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ բնական երևույթների նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը, որպեսզի հիմնական դպրոցում արդեն իսկ ձևավորված հետաքրքրությունների հիման վրա տրվի այդ երևույթների գիտական բացատրությունը:

Միջին դպրոցի ծրագրի «Բնություն, բնական գիտություններ» ուսումնական բնագավառի բովանդակությունը նպատակաուղղված է բնության տարածված երևույթները, օրինաչափություններն ու օրենքներն իմացող, գիտելիքներն առօրյա իրավիճակներում կիրառող, բնության ներդաշնակությունը գիտակցող անձի ձևա- վորմանը:

Միջին դպրոցի ծրագիրը պետք է ներառի գիտելիքներ, պատկերացումներ՝ բնության մեջ առավել տարածված ֆիզիկական, քիմիական երևույթների, կենսաբա- նական, աշխարհագրական համակարգերի, նյութի կառուցվածքի, մարմինների շարժման և փոխազդեցության, էներգիայի տեսակների և փոխակերպումների, արե-գակնային համակարգի, տիեզերքի մարմինների, դրանց շարժման, նյութերի հիմ-նական հատկությունների և փոխակերպումների, կենդանի օրգանիզմների հիմնա-կան հատկանիշներ ի, մարդու օրգանիզմի կառուցվածքի և կենսագործունեության, առողջ ապրելակերպի կանոնների, երկրագնդի տարբեր տարածքների, այդ թվում՝ նաև Հայաստանի բնության առանձնահատկությունների մասին: Միջնակարգ դպրո-ցի ծրագրի «Բնություն , բնական գիտություններ» ուսումնական բնագավառի բովան-դակությունը նպատակաուղղված է բնության երևույթների մասին համակարգված գիտելիքներ ունեցող, ճանաչողության մեթոդներին տիրապետող և գործնականում

կիրառող, քաղաքակրթության զարգացման գործում բնական գիտությունների դերը կարևորող, գիտական աշխարհայացք ունեցող անձի ձևավորմանը:

Միջնակարգ դպրոցի ծրագիրը պետք է ներառի կայուն գիտելիքներ, պատկերացումներ՝ բնության երևույթների ուսումնասիրման տեսական և փորձարարական մեթոդների, ֆիզիկական երևույթները նկարագրող հիմնական օրենքների և տեսությունների, նյութի կառուցվածքի և քիմիական փոխակերպումների օրինաչափությունների, ընդհանուր կենսաբանական օրինաչափությունների, երկրագնդի աշխարհագրական թաղանթի կառուցվածքի, զարգացման օրինաչափությունների, մարդ-բնություն, բնություն-հասարակության փոխադարձ կապերի մասին:

Ընտանիքը պետք է գիտակցի բնագիտական առարկաների ուսուցման նպատակը հիմնական դպրոցում տարբեր բնագիտական առարկաներից ձեռք բերած գիտելիքների ընդհանրացման ու մեկ միասնական համակարգով ներկայացման միջոցով սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորումն է, նրանց մտավոր որակների, կենդանի և անկենդան բնության մասին գիտելիքները ուսումնական գործընթացում, անձնական և հասարակական կյանքում կիրառելու կարողությունների զարգացումը: Բնագիտական առարկաներից ստացած գիտելիքները ԿԱՊԿ ունեցող երեխաների մոտ կնպաստեն հետևյալ վերջնարդյունքների ձևավորմանը.

1) վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունները՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն.

2) քննարկել, հայտնել դիրքորոշում և կատարել գիտակցված ընտրություն աշխարհահանաչողության ձևերի վերաբերյալ.

3) բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք.

4) առաջադրել հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ: Վերլուծել ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարել վերացարկումներ և ընդհանրացումներ.

5) կիրառել համալիր գիտելիք և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիապես զարգացող աշխարհում և տեղեկատվության բազմազանության մեջ կողմնորոշվելու համար.

6) վերլուծել և համադրել կայուն զարգացման և մարդկության համամոլորակային հիմնախնդիրները և դրանց փոխադարձ կապերը.

7) քննարկել գիտատեխնիկական զարգացմանն առնչվող էթիկական հարցեր և ունենալ փաստարկված դիրքորոշում դրանց վերաբերյալ.

8) պահպանել ակադեմիական ազնվություն տեղեկության աղբյուրներն օգտագործելիս.

9) օգտագործել համացանցը որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ.

10) քննադատաբար վերաբերվել իր և ուրիշների ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծել հասանելի տեղեկությունը, ճանաչել, կառուցել և գնահատել փաստարկները:

Սովորողի մեջ խնդիրները ստեղծագործաբար լուծելու ունակություններ ձևավորելու համար անհրաժեշտ է առաջին հերթին զարգացնել և լայնացնել նրա առարկայական գիտելիքների շրջանակը՝ երևակայության համար զգայական հիմքեր ստեղծելով: Առանձնացվում է սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորման հետևյալ պայմանները.

• Ուսումնական նյութի զարգացնող հնարավորությունների գերակայություն նրա տեղեկատվական հագեցվածության նկատմամբ.

• Սեփական հետազոտական պրակտիկայի կիրառության գերակայություն գիտելիքների վերարտադրողական յուրացման նկատմամբ.

• Ուղղորդվածություն դեպի ինտելեկտուալ նախաձեռնություն, որը ենթադրում է սովորողի ինքնուրույնության դրսևորում տարբեր ուսումնական և հետազոտական խնդիրներ լուծելիս, ձգտում՝ գտնելու խնդրի լուծման ինքնատիպ հնարավոր այլընտրանքային ուղի, դիտարկելու հիմնախնդիրն առավել խոր մակարդակով:

Ընդունելով առանձին գիտությունների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) ունեցած դերն ու նշանակությունը դպրոցում բնագիտական աշխարհայացք ձևավորելիս մենք պետք է ընդունենք նաև միջառարկայական կապերի վերաբերյալ դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը և նշանակությունը: Դասընթացի նպատակն է բացահայտել ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, էկոլոգիա գիտությունների միջև առկա կապերը, դրանց համակողմանի և միասնական ուսումնասիրության դերը երեխաների բնագիտական աշխարհայացքի ձևավորման գործում:

Հատկանշական և շատ կարևոր փաստ է այն, որ ԿԱՊԿ ունեցող երեխաները առավել հետաքրքրված և սիրով են ուսուցանում բնագիտական առարկաներն այն դեպքում, երբ դասարանում նրանց հետ զուգահեռ սովորում է իրենց հարազատ քույրը կամ եղբայրը: Մանավանդ, երբ նրանք ունենում են մասնագիտական համապատասխան կողմնորոշում: Այստեղ արդեն որոշիչ դեր տանում են ոչ թե ծնողները, այլև հարազատ քույրը կամ եղբայրը, որոնց կողմից ընտրված բնագիտական առարկաների կարևորությունը մոտիվացնում է նաև ԿԱՊԿ ունեցող երեխային: Ո՞վ կարող է ավելի լավ ներկայացնել բնագիտական առարկաների դերն ու կարևորությունը երեխայի ապագայի ճիշտ ձևավորման գործում, եթե ոչ դրանց լիարժեք նշանակությունը ըմբռնած և դասարանում ԿԱՊԿ ունեցող իր հետ միաժամանակ սովորող քույր կամ եղբայր ունեցող երեխան:

Ընտանիքի անդամները պետք է գիտակցեն և հասկանան, որ երեխան առաջին հերթին անհատ է, ով դառնալու է հասարակության լիարժեք անդամ: Եվ հենց այսօր պետք է անել ամեն հնարավորն ու անհնարինը, որպեսզի երեխայի մեջ ուսուցչին զուգահեռ ներդրվի սեր դեպի բնագիտական առարկաները:

1. Կրթության առանցքային հարցերից մեկը հանրակրթության ուսուցիչների դժվարություններն են՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին բնագիտական առարկաներ դասավանդելու և դասարանում ներառական միջավայր ստեղծելու հարցերում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության հաջող ընթացքը :

2. Ներառական կրթության կազմակերպումը ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթական հաստատություններ անարգել մուտքի համար տեխնիկական պայմաններ ստեղծելու խնդիր է, այլև նորմալ զարգացող երեխաների և նրանց ծնողների կողմից ընդհանուր կրթական գործընթացում հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցության կարևորության մասին գիտակցում: Ներառական պրակտիկայի իրականացման հաջողությունը մեծապես կախված է ուսուցիչների և ծնողների համատեղ փոխգործակցության պատրաստակամությունից:

3. Բազմամասնագիտական թիմը բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում:

4. Ընտանիքը պետք է գիտակցի բնագիտական առարկաների ուսուցման նպատակը հիմնական դպրոցում տարբեր բնագիտական առարկաներից ձեռք բերած գիտելիքների ընդհանրացման ու մեկ միասնական համակարգով ներկայացման միջոցով սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորումն է, նրանց մտավոր որակների, կենդանի և անկենդան բնության մասին գիտելիքները ուսումնական գործընթացում, անձնական և հասարակական կյանքում կիրառելու կարողությունների զարգացումը:

5. Հատկանշական և շատ կարևոր փաստ է այն, որ ԿԱՊԿ ունեցող երեխաները առավել հետաքրքրված և սիրով են ուսուցանում բնագիտական առարկաներն այն դեպքում, երբ դասարանում նրանց հետ զուգահեռ սովորում է իրենց հարազատ քույրը կամ եղբայրը: Մանավանդ, երբ նրանք ունենում են մասնագիտական համապատասխան կողմնորոշում:

6. Ընտանիքի անդամները պետք է գիտակցեն և հասկանան, որ երեխան առաջին հերթին անհատ է, ով դառնալու է հասարակության լիարժեք անդամ: Եվ հենց այսօր պետք է անել ամեն հնարավորն ու անհնարինը, որպեսզի երեխայի մեջ ուսուցչին զուգահեռ ներդրվի սեր դեպի բնագիտական առարկաները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.) (2019) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց կրթական ինտեգրում և սոցիալական հարմարեցում: Ուղեցույց հաշմանդամ երեխաների ուսուցիչների, հոգեբանների և ծնողների համար: – Մինսկ. Կրթության ազգային ինստիտուտ, 2005:

3. ՅՈՒՆԻՍԵՖ (2014) Ծնողների, ընտանիքի և համայնքի մասնակցությունը նեբառական կրթությանը, Տասնչորս վերինարների շարք և Ադիր տեխնիկական գրքույկներ նեբառական կրթության վերաբերյալ. Ժնև, Շվեցարիա:

4. Blue-Banning, M., Summers, J. A., Frankland, H. C., Lord Nelson, L., & Begle, G. (2004).